Արձանագրություն N 2

«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1ԱԼ» ծածկագրով ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ մեկնարկ՝ 15.01.2024թ.
ժամը 15:00:
ավարտ՝ 17.01.2024թ.
ժամը 15:00:

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հարություն Սեդրակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կարապետ Հյուսիսյան, Մովսես Ավագյան, Վահրամ Նորեկյան, Թադևոս Կիլիչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Բաբախանյան
Նիստի անցկացման վայրը՝
ք. Երևան 0010, Կառավարական տուն 3 հասցեով

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1ԱԼ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	**«Զենոն» ՍՊԸ**	Կոտայք, Ջրվեժ, 29 փ, տ 6	gnumner2020@mail.ru 091 408 671
2	**«Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ**	Արարատ, Հայանիստ, Էջմիածնի 35	m.buat@bk.ru 043 362 742
3	**«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ**	Երևան, Լյուքսեմբուրգի 2-րդ նրբանցք 5-22	info@voltamper.am 033 220 380

2. *Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*.

2.1 Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

- «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում ներառված գնային առաջարկը ներկայացվել է 1 տարվա հաշվարկով /ինչը վերաբերյալ «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ից ստացվել է գրություն, որով մասնակիցը խնդրում էր ներկայացված գնային առաջարկը դիտարկել մեկ տարվա համար: Գրությունը կցվում է:/: Սակայն տվյալ գնման ընթացակարգի հրավերի 5,3 կետով սահմանվում է, որ

«գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով»: Այն դեպքում, եթե գնահատող հանձնաժողովը չդիտարկի մասնակցի գրությունը և ներկայացված գնային առաջարկը դիտարկի որպես պայմանագրի ամբողջական կատարման համար /5 տարվա համար/ ներկայացված գին, առկա է հետևյալ անհամապատասխանությունը. Հրավերի 5.1 կետով սահմանվում է, որ «Առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:»: Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկը, կատարվելիք աշխատանքների ծավալները և բաղադրիչները, արձանագրում է, որ առաջարկված գումարը պակաս է տվյալ աշխատանքների կատարման ինքնարժեքից /մասնավորապես, միայն սպառվելիք էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների գումարը 5 տարվա ընթացքում կգերազանցի մասնակցի գնային առաջարկով ներկայացված գումարը, մինչդեռ առկա են բազմաթիվ այլ անհրաժեշտ ծախսեր՝ նյութերի ձեռքբերման, աշխատանքների կատարման, համապատասխան տեխնիկական միջոցների շահագործման, բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման և այլնի համար/:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04,05,2017թ, N 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքներ**	
	Նախահաշվային գին - ՀՀ դրամ	
«Զենոն» ՍՊԸ	**283 329 333,33**	**339 995 200**
«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ	479 000 000	574 800 000
«Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ /մերժված/	52 622 000	63 146 400

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց.***

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1ԱԼ» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ «Զենոն» ՍՊԸ-ին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել

պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 (երեսուն) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

7. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի Նախագահ՝	----------	Հ. Սեդրակյան
	----------	Կ. Հյուսիսյան
	----------	Մ. Ավագյան
Անդամներ՝	----------	Վ. Նորեկյան
	----------	Թ. Կիլիչյան
Քարտուղար՝	----------	Կ. Բաբախանյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
գլխավոր քարտուղար Ա.Երիցյանին

Գր-2024/43

Հարգելի պարոն Երիցյան

ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1ԱԼ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Մ.Բուատ» ՍՊԸ հայտ է ներկայացրել մրցույթի գնահատող հանձնաժողովին:

Հաշվի առնելով, որ ընթացակարգի հրավերով սահմանված չէր պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի (5 տարվա) համար գնային առաջարկ ներկայացնելու պայման, չկար սահմանված նախահաշվային գին, նկատի ունենալով, որ ընթացակարգը կայացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով՝ առանց ֆինանսական միջոցների և յուրաքանչյուր տարվա համար պետք է կնքվի համապատասխան համաձայնագիր, իսկ պայմանագրի գինը գործոնային է, «Մ.Բուատ» ՍՊ ընկերությունը իր գնային առաջարկը հաշվարկել և ներկայացրել է մեկ տարվա համար:

Խնդրում եմ ընթացակարգի հայտերի գնահատման ժամանակ սույն փաստը ընդունել ի գիտություն՝ հետագայում տարընկալումներից խուսափելու համար:

Հարգանքով՝

«Մ.Բուատ» ՍՊԸ
Տնօրեն՝ **Լ.Գարսյանյան**